Անձնական համար՝_____ ԱԱՀ՝_____

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՓՈՒԼ - 2025-2026 ՈՒՍՏԱՐԻ
6-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Տևողությունը՝ 90 րոպե

- **Միրելի՛ աշակերտ, ուշադիր կարդա՛ տեքստը։**

Մի թագավոր շենացրել ու ծաղկեցրել էր իր երկիրը: Հիմա ծերացել էր: Հինգ որդի ուներ: Եվ մտածում էր, թե ո՛ր որդուն հանձնարարի իր աշխարհի կառավարումը: Շատ մտածեց ու գտավ ելքը: Մի օր կանչեց իր որդիներին, նրանց զանազան ծաղիկների սերմեր բաժանեց ու ասաց.

- Իմ սիրելի՛ զավակներ, հողե՛ր ընտրեցեք ձեզ համար: Մշակե՛ք հողը և ցանե՛ք այս սերմերը: Ում պարտեզը ճոխ ու խնամված լինի, նա կթագավորի ինձանից հետո:

Որդիները վերցրին սերմերն ու գնացին: Ընտրեցին հողամասեր, խնամեցին հողը, պարտեզներ շինեցին, առուներով ջուր բերեցին:

Գարնանը թագավորը իր պալատականների և օտար երկրների դեսպանների մեծ բազմությամբ ելավ գնաց՝ պարտեզները նայելու և թագաժառանգին գտնելու: Գնաց, մոտեցավ ավագ որդու պարտեզին: Ի՛նչ պարտեզ, իսկական դրախտ: Ամեն գույնի, ամեն բույրի ծաղիկներ ծով էին կապել պարտեզում: Նայեց թագավորը, նայեց, տրտմեց, մռայլվեց ու անխոս գնաց առաջ:

Դրանիկներն ու դեսպանները զարմացան արքայի վերաբերմունքից և լռելյայն գնացին նրա հետևից:

Ահա մյուս պարտեզը: Էլի ճոխ, առավել շքեղ ու զարդարուն: Այսպես նաև մյուս երկու որդիների պարտեզները շլացնում էին իրենց ճոխությամբ, փարթամությամբ ու գունեղությամբ:

Ավելի ու ավելի էր մռայլվում արքան, դեմքը խորշոմել ու ծերացել էր:

Վերջապես հասան կրտսեր որդու պարտեզին: Բոլորը ապշահար ու կարկամած կանգ առան: Մշակած, խնամած ու ոռոգած իր պարտեզում կանգնել էր արքայազնը: Նրա պարտեզում ոչինչ չկար: Անգամ մոլախոտ:

- Ո՞ւր են քո ծաղիկները, որդի՛, ցո՛ւյց տուր մեզ, - ասաց հայրը:

Որդին ասաց.

- Հա՛յր իմ, որքան աշխատեցի, քրտինք թափեցի, օր ու գիշեր ջրեցի, խնամեցի այս հողը, սակայն քո տված սերմերից և ոչ մեկը չծլեց, իմ հողաբաժինը այսպես մնաց ամայի:

Հոր դեմքը պայծառացավ, խորշոմները հարթվեցին: Նա գրկեց, համբուրեց կրտսեր որդու ճակատը:

- Ապրես, որդի՛, - ասաց հայրը, - դու ազնիվ, շիտակ և աշխատասեր մարդ ես: Քո եղբայրները անազնիվ և խաբեբա գտնվեցին, որովհետև այն սերմը, որ տվել էի բոլորիդ, նախապես խաշել և ոչնչացրել էի ներսի հունդը: Այդ սերմից ոչինչ բուսնել չէր կարող: Դու միակն ես, որ չնենգեցիր ու ուրիշ սերմ չցանեցիր քո պարտեզում:

Ապա թագավորը բռնեց որդու ձեռքը, կանգնեց ժողովրդի առջև և հայտարարեց բարձրագոչ.

- Ահա ձեր թագավորը: Նա արդար, շիտակ մարդ է և ձեզ կտանի ճշմարտի ու գեղեցիկի ճանապարհով:

- **Կատարի՛ր առաջադրանքները։**

1. **Ինչպիսի՞ն էին թագավորի տեսած առաջին չորս պարտեզները։** **1 մ.**
   ա) Պարտեզները լավ չէին խնամված։
   բ) Գունագեղ ու հոտավետ ծաղիկները քիչ էին։
   գ) Պարտեզներն այնքան գեղեցիկ էին, որ նման էին դրախտի։
   դ) Պարտեզներում շատ էին մոլախոտերը։

Անձնական համար՝_____ ԱԱՀ՝_____

2.Եթե թագավորն ինքը շենացրել ու ծաղկեցրել էր իր երկիրը, ինչո՞ւ չհավանեց որդիների շքեղ պարտեզները: 1 մ.

ա) Որդիները չէին աճեցրել թագավորի սիրած ծաղիկներից:
բ) Թագավորը բոլորովին չհավանեց ծաղիկների բույրը:
գ) Այնքան շքեղ չէին, որքան իր ստեղծած պարտեզներն էին:
դ) Թագավորը զայրացավ որդիների անազնիվ արարքից:

3. Դո՛ւրս գրիր կրտսեր որդու պարտեզը բնութագրող բառը: 1 մ.

_____

4. Բացատրի՛ր նշված դարձվածքի իմաստը. 1 մ.

քրտինք թափել - _____

5. Բացատրի՛ր *լռելյայն* բառի իմաստը: 1 մ.

_____

6.Դո՛ւրս գրիր այն նախադասությունը, որտեղից երևում է, թե ըստ ծեր թագավորի պայմանի՝ որ որդին կարող էր թագավորել իրենից հետո: 1 մ.

_____

_____

7. Դո՛ւրս գրիր այն նախադասությունը, որը հուշում է, թե թագավորն ինչու որոշեց երկրի կառավարումը հանձնել կրտսեր որդուն: 1 մ.

_____

8. Դո՛ւրս գրիր ավագ որդիների արարքը բնութագրող ամենադիպուկ միտքը: 1 մ.

_____

9. Ինչո՞ւ թագավորի տված սերմերից ոչ մեկը չծլեց կրտսեր որդու հողում: Ընտրի՛ր ճիշտ պատասխանը: 1 մ.

ա) Կրտսեր որդու ընտրած հողատարածքը լավը չէր:
բ) Թագավորը միայն նրան վատ սերմեր էր տվել:
գ) Թագավորը նախապես խաշել էր բոլոր սերմերը:
դ) Եղբայրները խաշել էին կրտսեր եղբոր բոլոր սերմերը:

10. Դո՛ւրս գրիր 2 բառ, որոնք ցույց են տալիս, թե ինչ կատարվեց թագավորի հետ, երբ տեսավ խնամված պարտեզները: 2 մ.

ա) _____ բ) _____

11. Դո՛ւրս գրիր 2 բառ, որոնցով թագավորը բնութագրում է իր ավագ որդիներին: 2 մ.

ա) _____ բ) _____

12.Դո՛ւրս գրիր 3 բառ, որոնցով թագավորը բնութագրում է կրտսեր որդուն: 3 մ.

ա) _____ բ) _____ գ) _____

13. Տեքստից դո՛ւրս գրիր տրված բառերի հոմանիշները: 3 մ.

ա) տխրել _____
բ) կնճռոտվել _____
գ) պալատական _____

Անձնական համար՝_____ ԱԱՀ՝_____

14. Օգտվելով տեքստի պատկերներից՝ քո բառերով նկարագրի՛ր ավագ որդիների պարտեզները։ 5մ.

_____
_____
_____
_____

15. Քո կարծիքով՝ ի՞նչ էին զգում ավագ որդիները, երբ հայրը բացահայտեց նրանց խաբեությունը։ Մտքերդ շարադրի՛ր երկուսից երեք նախադասությամբ։ 5 մ.

_____
_____
_____
_____

16. Ըստ քեզ՝ ի՞նչ էր զգում կրտսեր որդին, երբ հայրը տեսավ նրա ամայի պարտեզը։ Կարծիքդ հիմնավորի՛ր երկուսից երեք նախադասությամբ։ 5 մ.

_____
_____
_____
_____

17. Երկուսից երեք նախադասությամբ գնահատի՛ր թագավորի արարքը քո տեսանկյունից։ 5 մ.

_____
_____
_____
_____

18. Ինչպե՞ս կվարվեիր, եթե թագավորը դու լինեիր, և ինչո՞ւ։ Մտքերդ շարադրի՛ր երկուսից երեք նախադասությամբ։ 5 մ.

_____
_____
_____
_____

19. Քեզ ի՞նչ սովորեցրեց այս հեքիաթը։ Մտքերդ շարադրի՛ր երկուսից երեք նախադասությամբ։ 5 մ.

_____
_____
_____
_____

20. Հեքիաթի համար դիպուկ վերնագի՛ր հորինիր։ 1 մ.

_____

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Հ. Հովհաննիսյան